Կարծիք

«Հայաստանի Հանրապետության Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ

20.01.2022 թ.-ին Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում քննարկման է ներկայացվել «Հայաստանի Հանրապետության Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը[1] (այսուհետ՝ նաև Նախագիծ), որի հեղինակն է ՀՀ Արդարադատության նախարարությունը:

Նախագծով առաջարկվում է էապես մեծացնել տեղեկատվության ազատության իրավունքի խախտման համար սահմանված տուգանքի չափերը: Սույնով ներկայացնում ենք Հիմնադրամի փորձագետների կարծիքը Նախագծում տեղ չգտած, սակայն տեղեկատվության ազատության իրավունքի խախտման այլ դրսևորումների կանխարգելման տեսանկյունից անհրաժեշտ մի շարք կարգավորումներով Նախագիծը լրամշակելու վերաբերյալ: Այսպես.

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 189[7] հոդվածը պատասխանատվություն է նախատեսում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունների, ինչպես նաև հանրային նշանակության կազմակերպությունների (տեղեկատվություն տնօրինողներ) պաշտոնատար անձանց կողմից օրենքով նախատեսված տեղեկությունը ապօրինաբար չտրամադրելու համար: Հոդվածը, ինչպես արդարացիորեն արձանագրվում է Նախագծի հիմնավորումներով, սահմանում է չափազանց մեղմ պատասխանատվություն, սակայն դրանից բացի պետք է արձանագրենք, որ այն ունի մի շարք այլ թերություններ, մասնավորապես.

1/ հոդվածը պատասխանատվություն է նախատեսում միայն հայցված տեղեկատվությունը **չտրամադրելու** համար և պատասխանատվություն չի նախատեսում այդ տեղեկատվությունը ապօրինաբար **ոչ լրիվ ծավալով տրամադրելու**, ինչպես նաև **սահմանված ժամկետում** չտրամադրելու համար,

2/ պատասխանատվություն չի նախատեսում **իրականությանը չհամապատասխանող, կեղծ** տեղեկատվություն տրամադրելու համար (այն դեպքերում, երբ պաշտոնատար անձի գործողություններում բացակայում է պաշտոնեական կեղծիքի հանցակազմը),

3/ պատասխանատվություն չի նախատեսում օրենքի ուժով **հրապարակման ենթակա տեղեկատվությունը չհրապարակելու** համար, ինչը նվազ կարևոր չէ, քան հայցված տեղեկատվությունը տրամադրելը:

[1] https://www.e-draft.am/projects/3931/about

Գտնում ենք, որ տեղեկատվության ազատության իրավունքը վերը նշված եղանակներով խախտելու համար պատասխանատվություն չնախատեսելը որևէ կերպ արդարացված չէ, քանի որ չկա դրա համար որևէ ողջամիտ և օբյեկտիվ հիմք: Այս տեսանկյունից հատկանշական է և նախորդ պնդումը հիմնավորող է այն, որ, ի տարբերություն քննարկվող զանցակազմի, ՎԻՎ օրենսգրքի 189[10] հոդվածով նախատեսված զանցակազմի դեպքում օրենսդիրը նախատեսել է պատասխանատվություն ոչ միայն պետական մարմնին (պաշտոնատար անձին) իր օրինական գործունեության համար անհրաժեշտ օրենքով նախատեսված տեղեկությունը **չտրամադրելու** համար, այլ նաև համապատասխան տեղեկությունը **սահմանված ժամկետում** չտրամադրելու, ինչպես նաև **ոչ լրիվ ծավալով** տրամադրելու կամ **աղավաղված տեսքով** տրամադրելու կամ **կեղծ տվյալ** տրամադրելու համար, ընդ որում՝ նշված հոդվածով ավելի մեծ դրամական պատասխանատվություն է նախատեսված (100.000 ՀՀ դրամ) համեմատ և՛ գործող 189[7] հոդվածի 1-ին մասով սահմանված պատասխանատվության (10.000-50.000 ՀՀ դրամ), և՛ Նախագծի փոփոխություններով սահմանված պատասխանատվության (30.000-70.000 ՀՀ դրամ):

Վերոգրյալի հետ մեկտեղ գտնում ենք, որ տեղեկատվության ազատության խախտման համար պատասխանատվության խստացման միասնական քաղաքականության ապահովման տեսանկյունից տրամաբանական և անհրաժեշտ է փոփոխություններ իրականացնել ոչ միայն ՀՀ ՎԻՎ օրենսգրքի 189[7] հոդվածում, այլ նաև ՎԻՎ օրենսգրքի 97[5] և 97[6] հոդվածներում, որոնք պատասխանատվություն են նախատեսում վթարի փաստը թաքցնելու, վթարի վերաբերյալ տեղեկությունների հաղորդման կարգը խախտելու, ճառագայթային իրավիճակի վերաբերյալ սխալ տեղեկություններ հաղորդելու, միջուկային և ճառագայթային անվտանգության վերաբերյալ տեղեկությունները թաքցնելու կամ աղավաղելու համար:
Ինչպես բխում է նշված հոդվածների դիսպոզիցիաներից, դրանք կարգավորում են միջուկային և ճառագայթային անվտանգությանն առնչվող տվյալների տրամադրման հետ կապված իրավահարաբերությունները, որոնք խիստ կարևոր նշանակություն ունեն մարդկանց կյանքի և առողջության, շրջակա միջավայրի անվտանգության ապահովման համար: Ուստի նշված տեղեկատվությունը թաքցնելն ու աղավաղելը պարունակում է խիստ վտանգավոր հետևանքների վրա հասնելու մեծ ռիսկ, և ակնհայտ է, որ նշված հոդվածներով սահմանված վարչական պատասխանատվությունը նույն կերպ համաչափ չէ և չի կարող ապահովել այս բնագավառում իրավախախտումները կանխարգելելու նպատակի իրականացումը: Հետևաբար, ինչպես և ՎԻՎ օրենսգրքի 189[7] հոդվածի դեպքում, անհրաժեշտ է խստացնել նշված իրավախախտումների համար պատասխանատվությունն ու մեծացնել սահմանված պատժաչափերը, ընդ որում, պայմանավորված պաշտպանվող իրավահարաբերության առավել կարևորությամբ, դրանք պետք է լինեն ավելի խիստ, քան այլ տեսակի տեղեկատվության տրամադրման պարտականությունները խախտելու համար / հոդված 189[7] /:

Առաջարկություններ

Վերոգրյալի հիման վրա առաջարկում ենք լրացնել Նախագիծը և.

1) ՀՀ ՎԻՎ օրենսգրքի 189[7] հոդվածով սահմանել պատասխանատվություն նաև տեղեկատվությունը ապօրինաբար ոչ լրիվ ծավալով տրամադրելու, իրականությանը չհամապատասխանող/կեղծ տեղեկատվություն տրամադրելու (այն դեպքերում, երբ պաշտոնատար անձի գործողություններում բացակայում է պաշտոնական կեղծիքի հանցակազմը), տեղեկատվությունը սահմանված ժամկետում չտրամադրելու, ինչպես նաև օրենքի ուժով հրապարակման ենթակա տեղեկատվությունը չհրապարակելու համար։
2) Էապես խստացնել ՀՀ ՎԻՎ օրենսգրքի 97[5] և 97[6] հոդվածներով սահմանված պատժաչափերը։

Իրավունքի զարգացման և պաշտպանության հիմնադրամ

Բաց հասարակության հիմնադրամներ- Հայաստան

«Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ

«Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ

«Հանուն հավասար իրավունքների» կրթական կենտրոն ՀԿ

«Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» ՀԿ

«Թումանյան» փաստաբանական գրասենյակ